

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 35/1

8 սեպտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Հ.Վ. Բաղդասարյան» ՍՊԸ 22.07.2015 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 20.07.2015 թ-ի թիվ 5103850 ակտի դեմ:

«Հ.Վ. Բաղդասարյան» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետի համաձայն «Հ.Վ. Բաղդասարյան» ՍՊԸ-ն (այսուհետ նաև ընկերություն) 2013 թ-ի հուլիսի 1-ից կիրառում է նոր սերնդի ՀԴՄ-ներ: Բացի այդ, «Հսկիչ-դրամարկղային մեքենաներին ներկայացվող պահանջների կիրառման կարգը» հաստատելու մասին ՀՀ կառավարության թիվ 846-Ն որոշման հոդված 40, կետ 5, «ա» ենթակետի պահանջները բավարարելու նպատակով ընկերությունը ներդրել է «ՀԾ-առևտուր» համակարգը:

Նոր-Նորք ՏՀ աշխատակիցները 24.06.2015 թ-ին հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման շրջանակներում, ընկերության Պ.Սևակ 50/2 հասցեում գտնվող խանութում համաձայն 20.07.2015 թ-ի թիվ 5103850 ակտի արձանագրել են խախտում, նշելով, որ դուրս չի բերվել երկու հատ «Արարատ Սլիմ» տեսակի ծխախոտի ՀԴՄ կտրոնը, որի դիմաց ՀՏ աշխատակիցը վճարել է 980 դրամ: Ընկերության տնօրենի և աշխատակցի կողմից ՀՏ աշխատակիցներին ներկայացվել է ժամը 17:52-ին տպված թիվ 00054049 ՀԴՄ կտրոնը, որտեղ արտացոլված է եղել 3 հատ «Օնե Օռանժ» տիպի ծխախոտի (յուրաքանչյուրը 370 դրամ) և 2 հատ «Արարատ Սլիմ» տեսակի ծխախոտի (յուրաքանչյուրը 490 դրամ) անվանումները, քանակները, արժեքները և ընդհանուր գումարը, որը կազմել է 2090 դրամ:

Ինչպես ներկայացրել է վաճառող Ս.Ալվազյանը ժամը 17:40-ի սահմաններում իրացրած 3 հատ «Օնե Օռանժ» տիպի ծխախոտի 1110 դրամի մուտքագրած կտրոնը ՀԴՄ ծրագրի խափանման պատճառով չի տպվել այլ ներառվել և արտացոլվել է հաջորդ` ՀՏ աշխատակցի կողմից գնված 2 հատ 980 դրամ ընդհանուր արժեքով «Արարատ Սլիմ» տեսակի ծխախոտի` իրացման մուտքագրած կտրոնի վրա: Ի դեպ ՀՏ աշխատակիցը գնում կատարելիս վճարվել է 1000 ՀՀ դրամ, վերցրել է 2 հատ «Արարատ Սլիմ» տեսակի ծխախոտ և արագ հեռացել է` չվերցնելով իրեն տրամադրված դրամի մասերը և ՀԴՄ կտրոնը:

Ընկերությունը գտնում է, որ ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշման երկրորդ հավելվածով սահմանված «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման» 20 և 23 կետերի պահանջների խախտում տեղի չի ունեցել, քանի որ նշված դրույթների համաձայն ՀԴՄ կիրառողները կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով ապրանքներ իրացնելիս հաշվարկներն իրականացնում են ՀԴՄ-ի միջոցով, ինչը տվյալ պարագայում վաճառողի կողմից իրականացվել է, սակայն ՀԴՄ ծրագրի խափանման հետևանքով մեկ տիպի մուտքագրված ապրանքի կտրոնը չի տպվել, այլ ներառվել և արտացոլվել է հաջորդ` անմիջապես հետո տպված իրացման կտրոնի վրա:

Տվյալ պարագայում վաճառողի կողմից խախտման դիտավորություն չի դրսևորվել, ինչն էլ չի կարող ընկերության համար առաջացնել որևէ պատասխանատվություն:

Վաճառող Մ.Այվազյանի ներկայացրած փաստարկները հիմնավորվում են վաճառքի սրահում գտնվող տեսագրման սարքերի տեսագրությամբ:

Ընկերությունը խնդրում է հաշվի առնել վերը նշված փաստարկները և չկիրառել 20.07.2015 թ-ի թիվ 5103850 ակտով նախատեսված պատժամիջոցները:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 17.06.2015 թ-ի թիվ 5103850 հանձնարարագրի համաձայն «Հ.Վ. Բաղդասարյան» ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության և աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգումներ: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 20.07.2015 թ-ի թիվ 5103850 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 600.000 դրամ:

Ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ գլխավոր հարկային տեսուչ Ռուբեն Շեխոյանի կողմից 24.06.2015թ-ին ժամը 17:30-ի սահմաններում ք.Երևան, Պ.Սևակի 50/2 հասցեում գտնվող «Հ.Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ» ՍՊԸ-ին պատկանող մթերային խանութից կատարվել է գնում՝ երկու հատ «Արարատ սլիմ» տեսակի ծխախոտ, որի դիմաց վճարվել է կանխիկ 980 դրամ: Գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և չի տրամադրվել համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն, ընկերության աշխատակից Մարինե Գրիշայի Այվազյանի կողմից: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ընկերության տնօրեն Համլետ Բաղդասարյանին են ներկայացվել ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 17:53-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվություն՝ 67349 դրամ գումարով: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը 980 դրամը մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոնը և ժամը 18:30-ին նորից դուրս է բերվել «Z» հաշվետվություն 68329 դրամ ընդհանուր գումարով:

Խախտվել է ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշման 2-րդ հավելվածի 20-րդ և 23-րդ կետերի պահանջները, որի համար ղեկավարվելով նույն հավելվածի 40-րդ կետի պահանջներով, ինչպես նաև «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի և «Հսկիչ- դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տուգանքը: Ակտով արձանագրվել է նաև, որ ընկերության գործունեությունն այդ մասով ենթակա է կասեցման 10 օրով:

Քննարկման ընթացքում գլխավոր հարկային տեսուչ Ռուբեն Շեխոյանը պնդեց, որ 24.06.2015թ-ին ժամը 17:30-ի սահմաններում ընկերությանը պատկանող մթերային խանութից իր կողմից գնվել է երկու հատ «Արարատ սլիմ» տեսակի

ծխախոտ, որի դիմաց վճարված կանխիկ գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և չի տրամադրվել համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն:

Կատարված գնման դիմաց ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը հիմնավորվել է գնումից հետո կատարված համապատասխան ստուգողական գործողություններով: Մասնավորապես, ժամը 17:53-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվություն՝ 67349 դրամ գումարով, կատարված վճարման արժեքը մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոնը և նորից դուրս է բերվել «Z» հաշվետվություն՝ 68329 դրամ ընդհանուր գումարով:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված պնդումներին, որ Ակտում հիշատակված գնման դիմաց ՀԴՄ կտրոն տրամադրվել է, պարզապես այդ կտրոնում ծրագրային խնդիրների հետ կապված արտացոլվել է նաև նախորդ գնման արժեքը, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել հետևյալը:

«ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգի 23-րդ կետով հստակ սահմանված է, որ. «Գանձապահը պարտավոր է՝

1) հաշվիչ սարքի միջոցով մուտքագրել ՀԴՄ կտրոնի վրա տպագրման համար անհրաժեշտ տվյալները, որոշել գնման ընդհանուր գումարը և տեղեկացնել գնորդին կամ պատվիրատուին.

2) ապրանքները հանձնելու պահին՝ գնորդից կամ մատուցված ծառայությունների դիմաց՝ պատվիրատուից գումար ստանալու դեպքում, իսկ կանխավճարների դեպքում՝ գումարը մուտքագրելուց անմիջապես հետո տրամադրել ՀԴՄ կտրոն.»:

Վերոգրյալից հետևում է, որ ցանկացած պարագայում գնվող ապրանքի դիմաց գնորդից գումար ստանալու դեպքում ապրանքը հանձնելու պահին (գնված ապրանքի հետ միասին) կատարված գնման գումարի չափով ՀԴՄ կտրոնի տրամադրումը պարտադիր է:

Քննարկվող դեպքում ստուգումն իրականացնող անձի կողմից կանխիկ գումարով գնված ծխախոտների հետ միասին համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Այսինքն, խախտվել են վերոգրյալ իրավանորմի պահանջները, որը և հիմք է հանդիսացել ղեկավարվելով նույն կարգի 40-րդ կետի դրույթներով «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված համապատասխան պատասխանատվությունը կիրառելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 20.07.2015 թ-ի թիվ 5103850 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ